


«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՃԱՇԱՐԱՆԻ ԿԱՀԱՎՈՐԱՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՏԵՂԱԴՐՈՒՄ, ՄՈՆԻՏԺՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՔԵՐՈՒՄ՝ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՐ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02/006

«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-24/18»



ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Արթուր Բաղդասարյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 07.11.2017թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«Ունիվերսալ-Օրդեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Սահակյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀԱԷԿ» ՓԲԸ ճաշարանի կահավորանքի նախագծում, տեղադրում, մոնիտժում և կարգաբերում՝ օգտագործվող սարքավորումների և հարմարանքների մատակարարմամբ» աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

- 1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- 2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- 3) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- 4) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

2.4.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների՝ ներառյալ մատակարարված ապրանքի հաշվապահական ձևակերպման համար հիմք ընդունել պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան դրական եզրակացության հիման վրա Գնորդի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար՝ նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **7 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված սարքավորումների և հարմարանքների որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող սարքավորումների և հարմարանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **730-րդ օրացուցային օրը**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված սարքավորումների և հարմարանքների թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **46436100 (քառասունվեց միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ **ԱԱՀ-7739350 ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 23218050 (քսաներեք միլիոն երկու հարյուր տասնութ հազար հիսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 Պայմանագրի N 1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորուստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում, կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.11 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀԱԷԿ» ՓԲԸ

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,
Հ/Հ 1930000199200100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,
ՀՎՀՀ 04401874,
Հեռ./Ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,
Հեռ.՝ 20-04-91, 33-40
E-mail: anpp@anpp.am




Ա. Բաղդասարյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ունիվերսալ-Օրդեր» ՍՊԸ

ք. Երևան, Հյուսիսային Պողոտա 62. 21տ,
Հ/Հ 1150005653700100,
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ,
ՀՎՀՀ 02572382,
Հեռ.՝ 010-53-81-61, 011-53-81-61
E-mail: armsaki@yahoo.com



Ա. Սահակյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չ/հ	Սեյնիկական բնութագիրը	Աշխատանքի					կատարման	
		չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր բանավոր	հասցեն	Ժամկետը**	
1	Ճաշարանի կազմակերպման համար առկա շինության համալիր կահավորման նախագծում՝ - Առանց շենքերի և ոչ սահուն մակերևույթով սալիկապատման նախագծում, - Լվացարանների հատվածի նախագծում՝ ներառելով պատերի սալիկապատում և օղակիղման համակարգի նախատեսմանը, որպեսզի բացառվի խոնավության կուտակումը և բորբոսի առաջացումը, - Ճաշարանի ամբողջ տարածքի օդափոխության համակարգի նախագծում, - Տարածքի ֆունկցիոնալ բաժանում, - Ճաշարանի կահավորման տեղակայման նախագծի մշակում՝ էլեկտրամոնուման, ջրամատակարարման և կոյուր (ջրահեռացման) համակարգերի պլանավորմամբ - Համաձայն նախագծի՝ սարքավորումների և հարմարանքների մատակարարում: Սարքավորումների և հարմարանքների մատակարարում «ՀԱԷԿ» ՓԲԸ կատարողի միջոցներով, տեղադրում՝ մոնտաժում, փորձարկում և թողարկում: Բոլոր մատակարարված սարքերի և հարմարանքների համար երաշխիքային սպասարկում առնվազն 2 տարի: Աշխատակազմի ուսուցում 1 օր «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում): Սարքավորումների և հարմարանքների նվազագույն պահանջները բերված են Հավելված 1.1-ում	լրակազմ	46436100	46436100	1	Արմավիրի մարզ, Ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում	

Ընդ որովհետև մասնակիցը պետք է ներկայացնի յուրաքանչյուր սարքավորում և հարմարանքի արժեքը՝ հավելված 1.1 տեսքով:



ԿԱՏԱՐՈՂ
«Ունիվերսալ-Օրդեր ՍՊԸ, ՀՀ»
ՍՊԸ
Ս. Սահակյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

h/h	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափան միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
Բոլոր սարքավորումները և հարմարանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ:							
Տաք հոսքազօհի սարքավորումներ							
1	Էլեկտրական սալօջախ	ԷԼԷՆՈՎԱ, ՌԴ	- Էլեկտրական սալօջախ, առանց ջերոցի, տակդիրով, 6 հատ չուգունե սալիկներով, յուրաքանչյուրը բաղկացած 2 տաքացնող էլեմենտներից, որոնք ապահովում են արագ և հավասարաչափ տաքացում: Սալիկների մակերեսը՝ 0,72 մ²: Սալօջախը ունի բարձրության կարգավորմամբ ոտքեր: Նույնիսկ հզորությունը՝ ոչ պակաս 18 Կվտ, նույնիսկ լարումը՝ 400 Վ, յուրաքանչյուր սալիկի չափը՝ 295x417մմ, սալիկի աշխատանքային մակերեսի ջերմաստիճանը՝ ոչ ավել քան 480°С, սալիկների տաքացման ժամանակը՝ ոչ ավել քան 30 րոպե, գաբարիտային չափերը՝ 1475x850x860 մմ, քաշը՝ 145 կգ, պահպանման պայմանները՝ համաձայն ГОСТ 15150-69-ի: Տրվում է երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը տրվում է սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	565253	565253	1
2	Տաք հոսքազօհի համար նախատեսված աշխատանքային մակերես	ԷԼԷՆՈՎԱ, ՌԴ	- Տաք հոսքազօհի համար նախատեսված աշխատանքային մակերես: Գաբարիտային չափերը՝ 400x750x475մմ, տախտակի մակերեսը՝ 395x635x18մմ, թույլատրելի ծանրաբեռնվածությունը՝ ոչ ավել քան 5կգ, քաշը՝ 22կգ	հատ	251706	251706	1

3	Էլեկտրական սալօջախ	ԷԼԵՆՈՎԱ, ՈՂ	- Էլեկտրական սալօջախ, առանց ջեռոցի, տակդիրով, 4 հատ չուգունն սալիկներով, յուրաքանչյուրը բաղկացած 2 տաքացնող էլեմենտներից, որոնք ապահովում են արագ և հավասարաչափ տաքացում: Սալիկների մակերեսը՝ 0,48 մ3: Սալօջախը ունի բարձրության կարգավորմամբ ոտքեր: Նոմինալ հզորությունը՝ ոչ պակաս 12 Կվտ, նոմինալ լարումը՝ 400 Վ, յուրաքանչյուր սալիկի չափը՝ 295x417մմ, սալիկի աշխատանքային մակերեսի ջերմաստիճանը՝ ոչ ավել քան 480°С, սալիկների տաքացման ժամանակը՝ ոչ ավել քան 30 րոպե, գաբարիտային չափերը՝ 1050x850x860 մմ, քաշը՝ 120 կգ, պահպանման պայմանները՝ համաձայն ГОСТ 15150-69-ի: պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեղադրման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում: - Արտադրական կաթսա՝ նախատեսված արգանակների, 3-րդ ճաշատեսակների, ջրի եռացման համար: Նախատեսված է՝ ջեմ, մուս պատրաստելու համար: Տարողությունը՝ 60լ: Տաքանալու տևողությունը մինչև 95 °С ոչ ավել քան 45 րոպե: Կաթսայի տրամագիծը՝ 425մմ, նոմինալ հզորությունը՝ 9,1 Կվտ, նոմինալ լարումը՝ 400Վ, գաբարիտային չափերը՝ 641x1015x1030: պահպանման պայմանները՝ համաձայն ГОСТ 15150-69-ի: Տրվում է երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը տրվում է սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	420202	420202	1
4	Արտադրական կաթսա	ԷԼԵՆՈՎԱ, ՈՂ	- Արտադրական սեղան՝ ամբողջկին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, տակդիրով, երկարությունը 600մմ +/-5մմ, լայնությունը 900մմ +/-5մմ, բարձրությունը 850մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Սեղանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խողովակ՝ 40մմX40մմ, խողովակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Սեղանի մակերեսը թաղանթապատված լինի կպչուն պաշտպանիչ ժապավենով: Սեղանի մակերեսի թիթեղը պետք է եռակցված լինի սեղանի կարկասին, եռակցման հատվածները չպետք է հետքեր թողնեն սեղանի աշխատաքային մակերեսի վրա: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրոդներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	հատ	1093168	2186336	2
5	Արտադրական սեղան	ՈՒՆԻՎԵՐՍԱԼ- Օրդեր ՍՊԸ	- Արտադրական թավա Տաքացնելու ջերմաստիճան 230 °С, մինչև 12րոպե ձերմակարգավորում, °С +20...+270	հատ	75508	75508	1
6	Արտադրական թավա	ԷԼԵՆՈՎԱ, ՈՂ	40մ3 աշխատանքային տարածք, նոմինալ հզորությունը՝ 9 Կվտ, նոմինալ լարումը՝ 400Վ, գաբարիտային չափերը՝ 840x1050x940: պահպանման պայմանները՝ համաձայն ГОСТ 15150-69-ի: Տրվում է երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը տրվում է սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման,	հատ	852133	852133	1

					փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:				
7	Աշխատանքային սեղան	Ուսիվերտալ-Օրդեր ՍՊԸ		հատ	149002	298004	2		
8	Օդափոխության ծածկ	Ուսիվերտալ-Օրդեր ՍՊԸ	Օդափոխության ծածկ՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չճանգուժվող պողպատից, լույսերով և ֆիլտրերով	հատ	570971	570971	1		
9	Բոլերային կոնվեկցիոն վառարան	ԷԼԷՆՈՎԱ, ՌԴ	- Բոլերային կոնվեկցիոն վառարան՝ նախատեսված գոլորշու միջոցով և տաք օդով մթերքների պատրաստման համար առանձին կամ կոմբինացված: Գոլորշու ստեղծման տարբերակ՝ գոլորշու գեներատորի միջոցով: Միաժամանակ մի քանի տարբեր ուղեաներ պատրաստելիս յուրաքանչյուրը պահպանում է իր համառոտ յուրահատկությունները: Խցիկի ներսի մաքսիմալ ջերմաստիճանը՝ 270°C: 10 հատ 1/1 չափի AISI 304 մոդելի չճանգուժվող պողպատից տարաներով և տակերով: Նոմինալ հզորությունը՝ 12.5 Կվտ, նոմինալ լարումը՝ 400Վ, գաբարիտային չափերը՝ 840x800x1695: պահպանման պայմանները՝ համաձայն GOST 15150-69-ի: Տրվում է երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը տրվում է սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	4029851	4029851	1		
10	Օդափոխության ծածկ	Ուսիվերտալ-Օրդեր ՍՊԸ	- Օդափոխության ծածկ՝ նախատեսված կոնվեկցիոն վառարանի համար, պատրաստված AISI 304 մոդելի չճանգուժվող պողպատից	հատ	204750	204750	1		

11	Աշխատանքային սեղան	Ուիլվերսալ-Օրդեր ՍՊԸ	- Աշխատանքային սեղան՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, տակդիրով, երկարությունը 1400մմ +/-5մմ, լայնությունը 700մմ +/-5մմ, բարձրությունը 850մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Սեղանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խողովակ՝ 40մմX40մմ, խողովակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Սեղանի մակերեսը թաղանթապատված լինի կաշուն պաշտպանիչ ժապավենով: Սեղանի մակերեսի թիթեղը պետք է եռակցված լինի սեղանի կարկասին, եռակցման հատվածները չպետք է հետքեր թողնեն սեղանի աշխատաքային մակերեսի վրա: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրոդներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	հատ	123455	123455	1
12	Աշխատանքային սեղան	Ուիլվերսալ-Օրդեր ՍՊԸ	- Աշխատանքային սեղան՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, տակդիրով, երկարությունը 1900մմ +/-5մմ, լայնությունը 700մմ +/-5մմ, բարձրությունը 850մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Սեղանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խողովակ՝ 40մմX40մմ, խողովակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Սեղանի մակերեսը թաղանթապատված լինի կաշուն պաշտպանիչ ժապավենով: Սեղանի մակերեսի թիթեղը պետք է եռակցված լինի սեղանի կարկասին, եռակցման հատվածները չպետք է հետքեր թողնեն սեղանի աշխատաքային մակերեսի վրա: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրոդներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	հատ	167627	335254	2
13	Սառնարան-պահարան	ԷԼԻՆՎԱ, ՌԴ	- Սառնարան-պահարան, 2 դռանի՝ տարողությունը 1400լ., ջերմաստիճանային ռեժիմը 0...+5°C դրական ռեժիմով: Հոսանքի տեսակը միաֆազ, 220 Վ: Սառցարան պահարանը պատրաստված պետք է լինի ամբողջովին անոթի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, պահպանման պայմանները՝ համաձայն ԴՕՇ 15150-69-ի, պատերը ջերմամեկուսացված պոլիուրեթանով: Գաբարիտային չափերը ոչ ավել 1485մմX850մմX2050մմ: Օգտագործումը թույլատրվում է շրջակա միջավայրում +43° C Ջերմաստիճանի, օդի հարաբերական խոնավության՝ 40-70% պայմաններում: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	899062	899062	1

14	Սառցարան-պահարան	ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ՌԴ	- Սառցարան-պահարան, 1 դռանի՝ տարողությունը 700լ., ջերմաստիճանային ռեժիմը -18 աստիճան բաասացական ռեժիմով: Հոսանքի տեսակը միաֆազ, 220 Վ: Սառցարան պահարանը պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, պահպանման պայմանները՝ համաձայն ГОСТ 15150-69-ի, պատերը ջերմամեկուսացված պոլիուրեթանով: Գաբարիտային չափերը ոչ ավել 740մմX850մմX2050մմ: Օգտագործումը թույլատրվում է շափերը ոչ ավել 270սկա միջավայրում +43° C ջերմաստիճանի, օդի հարաբերական խոնավության՝ 40-70% պայմաններում: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	747617	747617	1
15	Սեղան-սառնարան	ԳՐԱՆԴԵ, ՌԴ	- Սեղան-սառնարան, 3 դուռ -2...+ 10° C ջերմաստիճանային ռեժիմով ,պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 1630մմX705մմX850մմ: Օգտագործումը թույլատրվում է 270սկա միջավայրում +43° C ջերմաստիճանի, օդի հարաբերական խոնավության՝ 40-70% պայմաններում: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	694631	2083893	3
16	Աշխատանքային սեղան	ՌԻՆՎԵՐՍԱԼ-Օրդեր ՄԴԸ	- Աշխատանքային սեղան՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, տակդիրով, երկարությունը 1000մմ +/-5մմ, լայնությունը 700մմ+/-5մմ, բարձրությունը 850մմ+/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Սեղանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խողովակ՝ 40մմX40մմ, խողովակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Սեղանի մակերեսը թաղանթապատված լինի կպչուն պաշտպանիչ ժապավենով: Սեղանի մակերեսի թիթեղը պետք է եռակցված լինի սեղանի կարկասին, եռակցման հատվածները չպետք է հետքեր թողնեն սեղանի աշխատաքային մակերեսի վրա: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրողներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	հատ	88168	88168	1

17	Աշխատանքային սեղան	Ուիլյամ Օրդեր ՍԴԸ	- Աշխատանքային սեղան՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, տակիրիով, երկարությունը 1600մմ +/-5մմ, լայնությունը 700մմ +/-5մմ, բարձրությունը 850մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Սեղանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խորրվակ՝ 40մմX40մմ, խորրվակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Սեղանի մակերեսը թաղանթապատված լինի կաշուն պաշտպանիչ ժապավենով: Սեղանի մակերեսի թիթեղը պետք է եռակցված լինի սեղանի կարկասին, եռակցման հատվածները չպետք է հետքեր թողնեն սեղանի աշխատաքային մակերեսի վրա: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրոդներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	141074	141074	141074	1
18	Լվացարան	ԷԼԻՆՈՎԱ, ՈՂ	- Լվացարան, 2 թասով, տակիրիով՝ ամբողջովին պատրաստված AISI 304 մոդելի չժանգոտվող պողպատից, երկարությունը 1200մմ +/-5մմ, լայնությունը 700մմ +/-5մմ, բարձրությունը 850մմ +/-5մմ, մետաղի հաստությունը ոչ պակաս 0.8մմ: Լվացարանի ոտքերը քառակուսի կտրվածքով չժանգոտվող պողպատից խորրվակ՝ 40մմX40մմ, խորրվակի պատի հաստությունը ոչ պակաս 1,2մմ: Ցուրաքանչյուր բաժանունները պետք է ունենա ջրի հեռացման իր հարմարանքը: Բոլոր եռակցման կարերը իրականացնել չժանգոտվող պողպատի համար նախատեսված էլեկտրոդներով, եռակցումից հետո դրանք մշակված համապատասխան նյութով:	343423	343423	343423	1
Ինքնապատրվում							
1	Սկուտերների և ճաշի հավաքածուների համար նախատեսված ինքնապատրվման հոսքագծի մաս: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 630մմX790մմX1365մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման- թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	ԷԼԻՆՈՎԱ, ՈՂ	- Սկուտերների և ճաշի հավաքածուների համար նախատեսված ինքնապատրվման հոսքագծի մաս: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 630մմX790մմX1365մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման- թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	340214	340214	340214	1
2	Սառը խորտիկների ցուցափեղի	ԷԼԻՆՈՎԱ, ՈՂ	- Սառը խորտիկների ցուցափեղի՝ ինքնապատրվման հոսքագծի համար: Նույնիսկ հզորությունը՝ 1.15կՎտ, նույնիսկ լարումը՝ 220Վ: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չժանգոտվող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 1500մմX805մմX1700մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման- թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	1641344	1641344	1641344	1

3	Ինքնաապաստարկման հոսքագծի մարմիտ	ԷԼԻՆՈՎԱ, ՈՂ	- Ինքնաապաստարկման հոսքագծի մարմիտ՝ սալիկներով: Նումինալ հզորությունը՝ 4.021Կվտ, նումինալ լարումը՝ 400Վ: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չճանճուկող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 1120մմX805մմX1360մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	514058	514058	1
4	Ափսեների տաքացման համար նախատեսված ինքնաապաստարկման հոսքագծի մաս: Նումինալ հզորությունը՝ 1.6Կվտ, նումինալ լարումը՝ 220Վ: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չճանճուկող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 630մմX805մմX855մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	ԷԼԻՆՈՎԱ, ՈՂ	- Ինքնաապաստարկման հոսքագծի մարմիտ, որը ներառում է տարաներ՝ 2xGN1/1-150, 2xGN1/2-150, 3xGN1/3-150: Նումինալ հզորությունը՝ 3.021Կվտ, նումինալ լարումը՝ 220Վ: Պատրաստված պետք է լինի ամբողջովին սննդի միջավայրում օգտագործման համար թույլատրելի չճանճուկող պողպատից, գաբարիտային չափերը ոչ ավել 1500մմX805մմX1365մմ: Պետք է տրվի երաշխիքային սպասարկում՝ 2 տարի: Նախքան ապրանքների մատակարարումը պետք է տրվի սարքավորման տեխնիկական հանձնարարականը՝ 1 օրում: Մատակարարի կողմից կատարվում են մատակարարման, տեղադրման, միացման, փորձարկման-թողարկման աշխատանքները՝ մինչև 3օրում, նաև աշխատակազմի ուսուցում՝ 1 օրում:	հատ	506596	506596	1
